ՀԱՊ-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Բողոք «Լիդիան Ինթերնեշնլ» 3-ում (Ծրագիր #27657)
ՄՖԿ-ի ներդրումների վերաբերյալ

Գնդեվազ և Ջերմուկ, Հայաստան

Դեկտեմբեր 2014

Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականի գրասենյակ
Միջազգային ֆինանսական կորպորացիա/
Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության
www.cao-ombudsman.org

Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականը

Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականի (ՀԱՊ) գրասենյակն անկախ օգնության մեխանիզմ է Համաշխարհային բանկի խմբի մասնավոր հատվածին աջակցող երկու ճյուղերի՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) և Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության (ԲՆԵԳ) կողմից ֆինանսավորվող ծրագրերի համար: Այն ուղղակիորեն հաշվետու է Համաշխարհային բանկի խմբի նախագահին: ՀԱՊ-ը լիազորված է դիտարկել ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի արդյունքում տուժած անձանց բողոքներն անաչառ, անկողմնակալ և կառուցողական կերպով, ինչպես նաև նպաստել այդ ծրագրերի բնապահպանական և սոցիալական արդյունքների բարելավմանը:

Ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար այցելեք ՀԱՊ կայք հետևյալ հղումով՝ www.cao-ombudsman.org:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՄՓՈՓԱԳԻՐ……...5
2. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....5
2.1. Ծրագիրը.....5
2.2. Բողոքը 7
3. ԳՆԱՀԱՏՈՒՄ 7
3.1. Մեթոդաբանություն.....7
3.2. Արդյունքներ.....8
3.2.1 Ծրագրի ակնկալվող օգուտները ….……8
3.2.2. Գնահատման ընթացքում բողոքարկուի կողմից վերհանված լրացուցիչ մտահոգություններ ……....8
3.2.3 Ընկերության տեսակետը ……..9
3.2.4 Հաջորդ քայլերը ……....9

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԲՆԵԳ	Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության
ՀԱՊ	Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդական
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ԲՄԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում

1. ԱՄՓՈՓԱԳԻՐ

2014 թ.-ի ապրիլին ՀԱՊ-ը ստացավ բողոք Գնդեվազի և Ջերմուկի համայնքների անդամների կողմից, որոնց աջակցում են 7 տեղական հասարակական կազմակերպություններ (ՀԿ): Բողոքը վերաբերում է Ամուլսարի ոսկու հանքավայրի հետազոտական աշխատանքները հովանավորող կրտսեր հանքարդյունաբերական «Լիդիան Ինթերնեշնլ» ընկերությունում ՄՖԿ-ի ներդրումային ծրագրին: ՀԱՊ-ի կողմից իրականացված գնահատման գործընթացի արդյունքում բողոքը կփոխանցվի ՀԱՊ-ի Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման ստորաբաժանում՝ ծրագրի հանդեպ ՄՖԿ-ի ցուցաբերած պատշաճ ջանադրությունը բնապահպանական և սոցիալական ոլորտներում գնահատելու համար: Սույն Գնահատման զեկույցում ներկայացված է ընդհանուր տեղեկատվություն գնահատման գործընթացի, այդ թվում՝ ծրագրի նկարագրի, բողոքի, գնահատման մեթոդաբանության և հաջորդ քայլերի վերաբերյալ:

2. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1. Ծրագիրը

Համաձայն ՄՖԿ-ի՝ «Լիդիանը» կրտսեր հանքարդյունաբերական ընկերություն է, որը հիմնականում զբաղվում է հետազոտման ծրագրերով Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում: Ամբողջությամբ իրեն պատկանող «Գեոթիմ» ՓԲԸ դուստր ձեռնարկությամբ «Լիդիանը» ստացել է լիցենզիաներ Ամուլսարի հանքավայրի հետազոտման համար: Ամուլսարը գտնվում է Հայաստանի կենտրոնական մասում՝ Երևանից մոտ 120 կմ հարավ: Ծրագիրն իրագործելիության առաջընթաց փուլում է: Իրագործելիության մանրակրկիտ ուսումնասիրությունը և ՇՄԱԳ-ը ավարտվել է 2014թ.-ի հուլիս ամսին: Բոլոր կարևոր թույլտվությունները ստանալու պարագայում ակնկալվում է, որ ծրագիրը կանցնի զարգացման և շինարարության փուլին: Ոսկու արտադրությունն առաջին անգամ նախատեսվում է իրականացնել 2017 թ.-ի սկզբին:

ՄՖԿ-ն 7.9% բաժնետեր է և 2007 թ. ի վեր ներդրել է $16 մլն. կանադական դոլարից ավել գումար տարբեր փուլերում: Ծրագիրը որակավորվում է, որպես Բ դասի ծրագիր ինչը նշանակում է, որ այն ունի սահմանափակ անբարենպաստ սոցիալական և/կամ բնապահպանական ազդեցություն, որը մեղմացուցիչ միջոցառումների միջոցով հնարավոր է հեշտությամբ վերացնել: ՇՄԱԳ-ը հայերեն լեզվով հրապարակվել է 2014թ.-ի օգոստոս ամսին: «Լիդիանը» կարծում է, որ միջազգային Բնապահպանական եւ սոցիալական ազդեցության գնահատումը (ԲՍԱԳ), որը վարկատուների պահանջ է, կհրապարակվի 2014թ.-ի դեկտեմբեր ամսին:



Նկար 1. Տեղանքի առաջարկված հատակագիծը (կազմված «Լիդիան Ինթերնեշնլի» կողմից տրամադրված քարտեզի հիման վրա)

2.2. Բողոքը

Բողոքը ներկայացվեց ՀԱՊ-ին 2014 թ.-ի ապրիլին Գնդեվազի և Ջերմուկի համայնքների երկու անդամների կողմից, որոնց աջակցում են յոթ տեղական ՀԿ-ներ: Բողոքարկուները մտահոգություն են հայտնում տեղի ջրամբարների աղտոտման, Կարմիր գրքում գրանցված կենդանիների և զբոսաշրջության տեղական կենտրոնի վրա ծրագրի ազդեցության, ոչ պատշաճ ՇՄԱԳ-ի և ՄՖԿ-ի Կատարողական ստանդարտների ու ազգային կանոնակարգերի խախտումների վերաբերյալ:

3. ԳՆԱՀԱՏՈՒՄ

2014թ.-ի ապրիլ ամսին ՀԱՊ-ը որոշեց, որ բողոքը համապատասխանում է ընդունելիության իր կողմից սահմանված չափանիշներին և սկսեց բողոքի գնահատումը: ՀԱՊ-ի սույն գնահատման նպատակն էր պարզաբանել բողոքարկուների կողմից բարձրացված խնդիրներն ու մտահոգությունները, հավաքագրել տեղեկատվություն իրավիճակի վերաբերյալ այլ շահառուների տեսակետի մասին և որոշել ՀԱՊ-ի Վեճերի լուծման թե Համապատասխանեցման գործառույթը պետք է նախաձեռնել:

3.1 Մեթոդաբանություն

Գնահատման ընթացքում ՀԱՊ-ը չի հավաքագրում տեղեկատվություն ըստ բողոքի էության որոշում կայացնելու համար (ՀԱՊ-ի կողմից բողոքի քննման գործընթացի ամբողջական նկարագրությունը տե՛ս Ա Հավելվածում):

ՀԱՊ-ի կողմից վերոնշյալ բողոքի գնահատումը ներառել է հետևյալ փուլերը.

- Ծրագրային փաստաթղթերի վերանայում,
- Ծրագրային տեղանքների այցելություն,
- Հանդիպումներ ազդակիր համայնքների անդամների, ընկերությունների ներկայացուցիչների և ՀԿ-ների հետ,
- Քննարկումներ ՄՖԿ-ի ծրագրային անձնակազմի հետ:

2014 թ. մայիս և հունիս ամիսներին ՀԱՊ-ը երկու անգամ այցելեց Հայաստան հանդիպելու համար տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում հետևյալ անձանց հետ.

- «Գեոթիմ» ՓԲԸ-ի և «Լիդիանի» աշխատակազմ,
- Հայրապետ Մկրտչյան, Գնդեվազի գյուղապետ,
- Ջերմուկի 10 բնակիչ,
- Գնդեվազի 6 բնակիչ,
- Սարավանի 4 բնակիչ,
- Լարիսա Մինասյան, «Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան» կազմակերպության գործադիր տնօրեն,
- Դավիթ Ամիրյան, «Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան» կազմակերպության Ծրագրերի տնօրենի տեղակալ,
- Ինգա Զարաֆյան, «ԷկոԼուր» ՀԿ-ի նախագահ,

- Աննա Շահնազարյան, «Փրկենք Թեղուտը» քաղաքացիական նախաձեռնության ներկայացուցիչ,
- Լևոն Գալստյան, «Համահայկական բնապահապանական ճակատի» ներկայացուցիչ,
- Սիլվա Ադամյան, «Թռչունների սիրահարների կենտրոն» ՀԿ-ի նախագահ,
- Արթուր Գրիգորյան, «Էկո բայթ» կազմակերպություն, իրավաբան,
- Էլեոնորա Գաբրիելյան, Հայկական բուսաբանական ընկերության նախագահ,
- Արթուր Աշուղյան, ՀՀ Էկոնոմիկայի նախարարի խորհրդական:

Տեղի բնակիչների հետ հանդիպումների ընթացքում ՀԱՊ-ը զրուցեց ինչպես հանքի շահագործման ծրագրի հակառակորդների, այնպես էլ՝ աջակիցների հետ:

3.2 Արդյունքներ

3.2.1 Ծրագրի ակնկալվող օգուտները

Հանքավայրի շահագործմանը սատարող տեղաբնակները նշեցին ծրագրի փաստացի և ակնկալվող օգուտները, օրինակ՝ աշխատանքի ավելի լավ հնարավորություններ, սոցիալական ծրագրեր (աջակցություն տեղական դպրոցներին, մշակութային և սպորտային ծրագրերին և այլն) և համայնքային բյուջեի զգալի ավելացում:

3.2.2 Գնահատման ընթացքում բողոքարկուի կողմից վերհանված լրացուցիչ մտահոգություններ

Ի լրումն սկզբնական բողոքում բարձրացված խնդիրներին և մտահոգություններին, գնահատման ընթացքում տարբեր շահագրգիռ անձինք բարձրացրեցին ստորև նշված ևս երկու լրացուցիչ մտահոգություն:

ա/ Հանքի շահագործման հետևանքները Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Հայաստանում իրականացվող «Համայնքների Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակություն» (ՀԳՌԿՄ) ծրագրի վրա

ՀԳՌԿՄ ծրագիրը նպատակ է հետապնդում բարձրացնելու 55 լեռնային համայնքների արոտավայրերից օգտվող անասնապահական ուղղվածություն ունեցող տնտեսությունների արտադրողականությունը և կայունությունը՝ կաթի արտադրության ծավալների աճի, արոտավայրերի բարելավված կառավարման և անասնապահական արտադրատեսակների վաճառքի ծավալների աճի միջոցով[1]: Որոշ բողոքարկուներ հայտնում են մտահոգություն առ այն, որ Ամուլսարի հանքի շահագործումը կհակասի ՀԳՌԿՄ ծրագրի նպատակներին և իրականացմանը՝ բացասական հետևանքներ ունենալով հանքի տարածքում և դրա շրջակայքում անասնապահության վրա: Գնահատման ընթացքում ՀԱՊ-ը հանդիպեց Համաշխարհային բանկի ծրագրերի պատասխանատու Արուսյակ Ալավերդյանին և հակիրճ ներկայացնելով ՀԱՊ-ի գործունեության ընթացակարգը, նրան տեղեկացրեց բողոքարկուների մտահոգությունների մասին: Ըստ Արուսյակ Ալավերդյանի, Համաշխարհային բանկը չի կանխատեսում ՀԳՌԿՄ ծրագրի վրա Ամուլսարի հանքավայրի շահագործման որևէ բացասական ազդեցություն:

[1] http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/COUNTRIES/ECAEXT/0,,contentMDK:22868348~menuPK:258613~pagePK:286510 6~piPK:2865128~theSitePK:258599,00.html

բ/ Մշակութային ժառանգություն

ՀԱՊ-ի անձնակազմին հայտնած մեկ այլ մտահոգություն վերաբերում էր ծրագրի իրականացման տարածքում և դրա շրջակայքում հնարավոր հնագիտական և մշակութային ժառանգության տեսակետից արժեք ներկայացնող գտածոների հայտնաբերմանը: Որոշ շահագրգիռ կողմեր նշեցին տարածքում էական պատմական և մշակութային նշանակություն ունեցող գտածոների, օրինակ՝ դամբարանների, հնադարյան բնակատեղիների պեղածոների, օբսիդիանից պատրաստված գործիքների հայտնաբերման հնարավորությունը՝ շեշտելով, որ անհրաժեշտ է անցկացնել ավելի շատ ուսումնասիրություններ և հետազոտություններ: Նաև առկա էին մտահոգություններ առ այն, որ հանքի հետախուզության համար օգտագործված ճանապարհները արդեն իսկ ոչնչացրել են որոշ պատմական հուշարձաններ:

Հարցազրույց տված անձանցից մի քանիսը պահանջեցին հանրայնացնել ընկերության կողմից հնագիտության ոլորտին առնչվող գիտական ուսումնասիրությունները և ավելի մանրամասն խորհրդակցել համապատասխան կառավարական գերատեսչությունների, օրինակ՝ ՀՀ Մշակույթի նախարարության ու Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հետ:

3.2.3 Ընկերության տեսակետը

«Լիդիանը» շեշտեց այն փաստը, որ ընկերությունը ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ստացել է իր կողմից ներկայացված ՇՄԱԳ-ի վերաբերյալ «դրական եզրակացություն» (նույնն է՝ հաստատում)՝ ՀՀ Ընդերքի մասին և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի շրջանակներում: Այս եզրակացությունը տրված է պաշտոնական փորձագիտական գործընթացի արդյունքում, որը նաև ներառում է՝ ՇՄԱԳ-ի հանրայնացումը, երկու հանրային լսումները և շահագրգիռ կողմերի մեկնաբանությունների ներկայացման համար հատկացված ժամանակահատվածը: «Լիդիանի» և «Գեոթիմ» ՓԲԸ-ի ներկայացուցիչները նշեցին, որ նրանք գործում են համաձայն միջազգային լավագույն փորձին հաշվի առնելով՝ ՄՖԿ-ի Կատարողական ստանդարտները և ՎԶԵԲ-ի Կատարողական պահանջները: Նրանք համարում են, որ այդ պահանջներին համապատասխանեցման իրենց ջանքերը արտացոլված է մի շարք կորպորատիվ քաղաքականության մեջ, այդ թվում՝ կառավարման, շրջակա միջավայրի, սոցիալական, առողջապահության եւ անվտանգության քաղաքականության[2]: ՀԱՊ գործընթացի առումով, «Լիդիանի» և «Գեոթիմի» ներկայացուցիչները արտահայտեցին իրենց նախապատվությունը բողոքարկուների հետ երկխոսությանը՝ ՀԱՊ-ի Վեճերի լուծման գործառույթի շրջանակներում:

3.2.4 Հաջորդ քայլերը

ՀԱՊ-ի լիազորությունները, գործառույթները, ու ծառայությունները մանրամասն քննարկելուց հետո բողոքարկուները տեղեկացրեցին ՀԱՊ-ին, որ իրենց կարծիքով ՀԱՊ-ի Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման գործառույթը լավագույնս կծառայի իրենց և Հայաստանի հանրության հետաքրքրություններին: Ուստի,

[2] http://www.geoteam.am/images/ENVIRONMENTALPOLICY-eng2.pdf
http://www.geoteam.am/images/soc_COMMUNITYPOLICYeng.pdf
http://www.lydianinternational.co.uk/editorimages/documents/Lydian-Public-Consultation-Disclosure-Policy.pdf
http://www.geoteam.am/en/corporate-governance/corporate-policies.html

համաձայն ՀԱՊ-ի Գործառնական ուղեցույցի բողոքը կփոխանցվի Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման ստորաբաժանում՝ ծրագրի հանդեպ ՄՖԿ-ի ցուցաբերած պատշաճ ջանադրությունը բնապահպանական և սոցիալական ոլորտներում գնահատելու համար:

Հավելված Ա

ՀԱՊ-ի կողմից բողոքի քննման գործընթացը

Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականի (ՀԱՊ) գրասենյակն անկախ օգնության մեխանիզմ է Համաշխարհային բանկի խմբի մասնավոր հատվածին աջակցող երկու ճյուղերի՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) և Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության (ԲՆԵԳ) կողմից ֆինանսավորվող ծրագրերի համար: Այն ուղղակիորեն հաշվետու է Համաշխարհային բանկի խմբի նախագահին: ՀԱՊ-ը լիազորված է դիտարկել ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի արդյունքում տուժած անձանց բողոքներն անաչառ, անկողմնակալ և կառուցողական կերպով, ինչպես նաև նպաստել այդ ծրագրերի բնապահպանական և սոցիալական արդյունքների բարելավմանը:

Նախնական գնահատումն իրականացվում է ՀԱՊ-ի Վեճերի կարգավորման ստորաբաժանման կողմից: ՀԱՊ-ի կողմից իրականացվող գնահատման նպատակն է՝ (1) պարզաբանել բողոքարկուի (բողոքարկուների) կողմից բարձրացված խնդիրներն ու մտահոգությունները, (2) հավաքագրել տեղեկատվություն իրավիճակի վերաբերյալ այլ շահառուների տեսակետի մասին և (3) օգնել շահագրգիռ կողմերին հասկանալ վեճերի լուծման իրենց հասանելի տարբերակները և որոշել արդյոք նրանք ցանկանում են հետամուտ լինել վեճերի համատեղ լուծման գործընթացին ՀԱՊ-ի վեճերի լուծման գործառույթի միջոցով, թե բողոքը պետք է վերանայվի Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման ստորաբաժանման կողմից:

Սույն փաստաթղթում ներառված են նախնական գրառումներ ՀԱՊ-ի անձնակազմին հայտնած տեսակետների և հետագա քայլերի մասին՝ կախված կողմերի՝ վեճերի լուծման և գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման գործընթացների միջև ընտրություն կատարելուց: *Սույն զեկույցով չի ընդունվում որևէ որոշում ըստ բողոքի էության:*

Համաձայն ՀԱՊ-ի Գործառնական ուղեցույցի[3]՝ բողոքը ստանալուց հետո սովորաբար ձեռնարկվում են հետևյալ քայլերը.

Քայլ 1: Բողոքի ստացման **հաստատում,**

Քայլ 2: **Ընդունելիություն:** Բողոքի ընդունելիության ստուգում և որոշման կայացում առ այն, թե արդյոք բողոքը համապատասխանում է ՀԱՊ-ի կողմից հետագա գնահատման չափանիշներին (15 աշխատանքային օրվանից ոչ ավել),

Քայլ 3: **ՀԱՊ-ի գնահատումը:** ՀԱՊ-ն իրականացնում է խնդիրների գնահատում և օգնում շահագրգիռ կողմերին հասկանալ և որոշել, թե արդյոք նրանք ցանկանում են հետամուտ լինել վեճերի փոխհամաձայնեցված լուծմանն, ինչն իրականացվում է ՀԱՊ-ի Վեճերի լուծման ստորաբաժանման կողմից վեճերի համատեղ լուծման գործընթացի միջոցով, թե գործը պետք է փոխանցվի Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման ստորաբաժանում՝ վերանայելու համար

[3] ՀԱՊ-ի դերի և աշխատանքի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար տե՛ս ամբողջական Գործառնական ուղեցույցը՝ http://www.cao-ombudsman.org/documents/CAOOperationalGuidelines2013_ENGLISH.pdf

ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից ցուցաբերված պատշաճ ջանադրությունը բնապահպանական և սոցիալական ոլորտներում: Գնահատումը կարող է տևել առավելագույնը 120 աշխատանքային օր:

Քայլ 4: **Վեճերի լուծման աջակցություն/միջնորդություն:** Եթե կողմերը որոշում են ընդունում հետամուտ լինել վեճերի համատեղ լուծման գործընթացին, ապա գործադրվում է ՀԱՊ-ի վեճերի լուծման գործառույթը: Վեճերի լուծման գործընթացը սովորաբար հիմնված է կամ մեկնարկում է համաձայն կողմերի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի և (կամ) փոխհամաձայնեցված սկզբունքային կանոնների: Այն կարող է ներառել միջնորդություն, փաստերի համատեղ հավաքագրում կամ վեճերի լուծման այլ համաձայնեցված մոտեցումներ, որոնք հանգեցնում են վեճերի լուծման համաձանագրի ստորագրման կամ այլ փոխհամաձայնեցված և պատշաճ նպատակի իրականացման: Վեճերի լուծման նման մոտեցումների հիմնական նպատակն է տուժած կողմերի համար ընդունելի եղանակով հասցեագրել բողոքում բարձրացված հարցերը և գնահատման կամ վեճերի լուծման գործընթացում վերհանված ու բողոքին առնչվող էական խնդիրները[4]:

Կամ

Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման ստորաբաժանման կողմից իրականացվող փորձաքննություն/աուդիտ: Եթե կողմերն ընտրում են Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման գործընթացը, ապա Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման ստորաբաժանումը սկսում է փորձաքննել դիտարկվող ծրագրի հանդեպ ՄՖԿ/ԲՆԵԳ-ի ցուցաբերած պատշաճ ջանադրությունը բնապահպանական և սոցիալական ոլորտներում՝ որոշելու համար ՄՖԿ/ԲՆԵԳ-ի՝ ծրագրին առնչվող գործունեության աուդիտի նպատակահարմարությունը: Փորձաքննությունը տևում է առավելագույնը 45 աշխատանքային օր: Եթե որոշում է ընդունվում աուդիտի նպատակահարմար լինելու մասին, ապա ՀԱՊ-ն իրականացնում է ՄՖԿ/ԲՆԵԳ-ի գործունեության մանրամասն աուդիտ: Աուդիտի զեկույցը՝ բոլոր հայտնաբերված խախտումների ներառմամբ, ՄՖԿ/ԲՆԵԳ-ի պատասխանի հետ միասին հանրայնացվում է:

Քայլ 5: **Մշտադիտարկում** և հետագա վերահսկողություն,

Քայլ 6: **Աշխատանքի ամփոփում** /Գործի փակում

[4] Այն դեպքում, երբ շահագրգիռ կողմերը սահմանված ժամկետում չեն կարողանում լուծել խնդիրները վեճերի համատեղ լուծման գործընթացի միջոցով, ՀԱՊ-ի Վեճերի լուծման ստորաբաժանումը նախ փորձում է աջակցել շահագրգիռ կողմերին նման անելանելի դրությունից (դրություններից) դուրս գալու գործում: Այդ տարբերակի անհնարինության դեպքում Վեճերի լուծման ստորաբաժանման անձնակազմը տեղեկացնում է շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ ՄՖԿ/ԲՆԵԳ-ի աշխատակազմին, Համաշխարհային բանկի խմբի նախագահին և խորհրդին, ինչպես նաև հանրությանն այն մասին, որ ՀԱՊ-ի Վեճերի լուծման ստորաբաժանումը փակել է գործը և փոխանցել բողոքը Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման ստորաբաժանում փորձաքննության անցկացման համար: